Էլբիս Պեպլոզյան, *հայցորդ*
Հայաստանի ազգային ագրարային համալսարան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԿԱԹԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱ ՎԻՃԱԿԸ և ԴՐԱ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ՄԻ ՔԱՆԻ ՈՒՂԻՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Բանալի բառեր – կաթ, կաթնամթերք, վերամշակող արդյունաբերություն, անասնապահական կոոպերատիվներ, ֆերմերային տնտեսություններ, մասնագիտացում

Կաթնամթերքի արտադրության ավելացման համար խիստ կարևոր է սեփական արտադրության հումքի առկայությունը: Ներկայումս, երբ կովերի գլխաքանակի մոտ 80 % գտնվում է գյուղացիական տնտեսություններում, որոնցում կաթի արտադրությունը արտադրական նպատակով չի իրականացվում, այս խնդիրը առաջիկայում դրական լուծում ստանալ չի կարող: Հոդվածում նշվում են մի քանի ուղիներ, որոնք կնպաստեն կաթի արտադրության ծավալի ավելացմանն ու որակական հատկանիշների բարձրացմանը:

Վերջին տարիների սննդի և վերամշակող արդյունաբերության առանձին ճյուղերում նկատվում է արտադրության ծավալների աճ: Սակայն վառելիքա-էներգետիկ և հումքային ռեսուրսների գների աճը, հումքի ներկրման և արտադրված արտադրանքի արտահանման դժվարությունները, տրանսպորտային ծախսերի աճն ու վարկային բարձր տոկոսադրույքները, ինչպես նաև հանրապետության բնակչության ցածր գնողունակությունը սահմանափակում են սննդարդյունաբերության կազմակերպությունների արտադրական հնարավորությունների օգտագործումը:

Սննդարդյունաբերության կազկակերպությունների արտադրանքի արտադրության ծավալի ավելացման կարևոր պայմանը՝ նրանց նյութական և հումքային ռեսուրսներով ապահովումն է, քանի որ դրանք հանդիսանում են արտադրության երեք հիմնական տարրերից մեկը՝ աշխատանքի առարկաները, որոնք կազմում են արտադրանքի իքնարժեքի մոտ 65 %-ը, իսկ առանձին ճյուղերում գերազանցում են 70% -ը և ոչ պակաս իր գնի կեսը:

Սննդարդյունաբերության գրեթե բոլոր ճյուղերի կազմակերպությունների հումքային բազան՝ գյուղատնտեսությունն է, որը համարվում է ՀՀ ագրոարդյունաբերական համալիրի հիմնական ոլորտներից մեկը, իսկ նրա կարևոր ճյուղերից է տավարաբուծությունը: Հանրապետությունում արտադրված կաթի և մսի 55%-ը ստացվում է տավարաբուծությունից: ՀՀ-ում բուծվող տավարի

գրեթե 93%-ը տեղի բնակլիմայական պայմաններին լավ հարմարված կաթնամսային ուղղություն ունեցող կովկասյան գորշ ցեղն է: Բուծվում են նաև հոլշտին, շվից, սիմենթալ և սևաբղեղ ցեղի կենդանիներ: Հանրապետությունում տավարաբուծությամբ զբաղվում են շուրջ 170 հազար գյուղացիական տնտեսություններ:

Տավարի գլխաքանակի միայն 20-21% -ն է (շուրջ 120 հազ. գլուխ) կենտրոնացված համեմատաբար խոշոր (50 և ավելի գլուխ) տնտեսություններում, իսկ մնացած 80% -ում՝ երեք գլխից էլ պակաս:

Ներկայումս ՀՀ-ում գործում են մեկ տասնյակից ավելի տավարաբուծական տոհմային տնտեսություններ, որոնցից առաջատարներն են՝ «Ագրոհոլդինգ Հայաստան» ԲԲԸ-ի, «Վամաքս» ՍՊԸ-ի, «Արզնի տոհմային ԹՏԽՏ» ԲԲԸ-ի և «Մուլտի Ագրո» ՍՊԸ-ի տավարաբուծական տնտեսությունները:

Աղյուսակ 1

ՀՀ խոշոր եղջերավոր անասնագլխաքանակի տեղաբաշխումը 2013թ.

Մարզերը	Խոշոր եղջերավոր անասուն (հազ. գլուխ)	Գյուղացիական մայրենիների թիվը, հատ	Գյուղացիական տնտեսությունների թիվը, հատ	1 գյուղական հայրենիքի հաշվով խոշ.եղջ.անաս., հատ	1 գյուղացիական տնտես. խոշ.եղջ. անաս., հատ
Արագածոտն	75,7	115	37125	658	2,03
Արարատ	41,4	94	53107	440	0,77
Արմավիր	47,7	95	50349	502	0,94
Գեղարքունիք	98,5	91	51351	1082	1,91
Լոռի	74,3	120	32558	619	2,28
Կոտայք	54,3	62	37620	875	1,44
Շիրակ	99,7	125	28162	797	3,54
Սյունիք	52,5	103	12958	510	4,05
Վայոց Ձոր	18,5	49	12844	377	1,44
Տավուշ	34,1	68	21953	501	1,55
Ք. Երևան	2,5	-	-	-	-
Ընդամենը	661,0	922	338037	716	1,95

Գյուղացիական տնտեսություններում արտադրվող կաթի զգալի մասը օգտագործվում է սեփական կարիքները հոգալու համար: Այսպես, խոշոր տավարաբուծական տնտեսություններում մեկ կովի միջին կաթնատվությունը կազմում է 3100 կգ, իսկ գյուղացիական տնտեսություններում՝ 1870 կգ: Անասնագլխաքանակի նման տեղա-

բաշխման և կովերի կաթնատվության ներկայիս մակարդակի համեմատությունից պարզ է դառնում, որ փոքր տնտեսություններում կաթի արտադրությունը արտադրական նպատակով արդարացված չէ, քանի որ գյուղացին շուկա է հանում իր արտադրած արտադրանքի ավելցուկը:

Շուկայական տնտեսության ձևավորման և զարգացման ներկա փուլում, գյուղացիական այդ մասնատված տնտեսությունները չեն կարողանում բռնել ժամանակի քննությունը և արդյունավետ վարել արտադրությունը՝ փոքր չափսերի, առանձին-առանձին գործելու, պահպանողական մտածելակերպի, կերի, գյուղտեխնիկայի ու սարքավորումների պակասի, տեխնիկապես ու բարոյապես դրանց մաշված լինելու և այլ պատճառներով:

Նշված խնդիրների լուծման համար անհրաժեշտ է ստեղծել կաթնային ուղղության անասնապահական կոոպերատիվներ:

Կոոպերատիվների կազմակերպման գործում խիստ կարևոր է գյուղացիական տնտեսությունների անդամների համար անցկացնել դասախոսություններ՝ կոոպերատիվների կազմակերպման սկզբունքների, իմաստի, առավելությունների և այլ առնչվող հարցերի մասին:

Կոոպերատիվների կազմակերպումը կնպաստի անասունների արհեստական սերմնավորման ու տոհմային աշխատանքների իրականացման, կերային ռեսուրսների արդյունավետ օգտագործման, կերի կայուն բազայի ստեղծման ու օպտիմալ կերաբաժնի կիրառման, կենդանիների պահվածքի և խնամքի առաջավոր մեթոդների ներդրման ու տարածման միջոցով ավելացնել կաթի և մսի համախառն արտադրության ծավալը, բարձրացնել անասունների մթերատվությունն ու արտադրության արդյունավետությունը, որն իր հերթին հնարավորություն կնձեռնի մեծացնելու գյուղատնտեսական հումք վերամշակող կազմակերպությունների արտադրության ծավալը:

Խոշոր եղջերավոր անասունների մթերատվության բարձրացման և գլխաքանակի ավելացման համար, 2007թ-ին ՀՀ կառավարությունը հաստատեց «Տավարաբուծության զարգացման 2007-2015թթ ծրագիր», որի հիմնական նպատակն էր Եվրոպայից ներկրել բարձր մթերատու ցեղատեսակների /շվից, հոլշտին և սիմեթալ/ երինջներ և տարաժամկետ (առաջին տարում՝ 10%, երկրորդում՝ 20%, երրորդում՝ 30%, չորրորդում՝ 40%) վճարման պայմանով, տրվեն գյուղացիական և ֆերմերային տնտեսություններին: 2007թ.-ից մինչև օրս ներկրվել է 1811 գլուխ տոհմային երինջներ և բաշխվել խոշոր տավարաբուծական տնտեսություններին:

Անհրաժեշտ է նշել, որ ներկրված կենդանիների կլիմայավարժեցման հետ կապված լուրջ խնդիրներ գոյություն ունեին: Նրանց

պետք էր պահել հատուկ պայմաններում, սակայն սովորական ֆերմաներում դա հնարավոր չէր: Ուստի դրանց մի մասը չդիմացան և տնտեսությունները կրեցին վիթխարի վնասներ, որոնց մարման համար կառավարությունը ոչ մի օժանդակություն չի ցուցաբերել:

Տոհմային տնտեսությունների սեփականատերերը նշել են, որ հանրապետություն ներկրված կենդանիներին պահել են սովորել կորուստներ կրելով՝ և ոչ ոք, ոչ մի բացատրական աշխատանք չի տարել: Այս կենդանիներին ներկրելուց հետո իրենք մի քանի հիվանդությունների մասին իմացել են առաջին անգամ: Այդ իսկ պատճառով ներկայումս խոշոր տնտեսությունները հրաժարվում են տահմային երինջներ ներկրելուց:

ՀՀ-ում կաթի արտադրության ավելացման և որակի բարելավման համար անհրաժեշտ է՝

1. Կոոպերատիվների կազմակերպման միջոցով հիմնադրել կաթնային ուղղություն ունեցող, ժամանակակից ստանդարտներին համապատասխան խոշոր ֆերմերային տնտեսություններ;
2. Ներկրվող անասուններն անհրաժեշտ է պահել տիպային ֆերմաներում: Դրանց տրամախաչումն իրականացնել տեղական գորշ ցեղի կովերի հետ և աշխատել ստացված սերունդը հարմարեցնելու Հայաստանի բնակլիմայական պայմաններին:
3. ՀՀ-ում յուրաքանչյուր համայնքին հատկացնել անասնաբույծի և անասնաբույժի հաստիքներ, որոնք կօգնեն գյուղացիներին իրականացնել կենդանիների պատվաստման, հիվանդությունների դեմ պայքարի, արհեստական սերմավորման և մի շարք այլ աշխատանքներ: Այսպիսով, համայնքի կենդանիները կլինեն մասնագետի ամենօրյա հսկողության տակ:
4. Սեփական կերի կայուն բազայի ստեղծման համար, բացի արոտ - օգտագործողների կոոպերատիվների ստեղծումից և նրանց գյուղտեխնիկա հատկացնելուց, անհրաժեշտ է գյուղացուն խրախուսել՝ իր չօգտագործվող վարելահողերի մի մասը դնելու կերային մշակաբույսերի տակ և կիրառելու կերային ցանքաշրջանառություն:
5. Հանրապետության բոլոր համայնքներում, որտեղ զբաղվում են կաթի արտադրությամբ, ստեղծել կաթի ընդունման կետեր, որոնք գյուղացու հետ կկնքեն երկկողմանի պայմանագրեր և նրան կազատեն իրացման հետ կապված դժվարություններից:

Վերը նշված միջոցառումների իրականացման համար անհրաժեշտ է ցուցաբերել պետական մոտեցում, որի դեպքում գյու-

ղատնտեսության նախարարությունը կառավարության հետ միասին, ոչ միայն տավարաբուծության զարգացման համար ծրագրեր հաստատեն, այլ նաև մասնագետների և տոհմային տնտեսությունների սեփականատերերի հետ միասին դրանք կյանքի կկոչեն:

Գրականություն

1. Հակոբյան Լ.Լ., Ճեպեճյան Շ.Ա. «Գյուղատնտեսության էկոնոմիկա», Երևան, 2012թ., ՀՊԱՀ
2. Հայաստանի վիճակագրական տարեգիրք, ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն, Երևան, 2014թ.

АННОТАЦИЯ

Элбис Пеплозян, соискатель
НАУА

ПУТИ СОВЕРШЕНСТВОВАНИЯ И НЫНЕШНЕЕ СОСТОЯНИЕ ПРОИЗВОДСТВА МОЛОКА В РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ

Ключевие слова: молоко, молочний продукт, переработиваюшая промышленность, скотоводчецкие кооперативии, фермерские хозяства, специализация

Для увеличения производства молочных продуктов необходимо собственное производство сырья. В настоящее время 80% коров находится в крестьянских хозяйствах, где не происходит производство молока в промышленных целях, поэтому данный вопрос в ближайшее время не может иметь положительного решения. В статье указаны некоторые пути, которые могут поспособствовать увеличению объема производства и повышению качества молочного производства.

ANNOTATION

Elbis Peplozyan

WAYS OF IMPROVING AND THE CURRENT STATE OF MILK PRODUCTION IN THE REPUBLIC OF ARMENIA

Key words – milk, dairy, processing industry, livestock cooperatives, farms, specialization

In order to improve the performance of dairy products own production of raw materials is necessary. Nowadays 80% of the cows can be found in rural households, where milk is not produced for industrial purposes, therefore this issue in the near future cannot have a positive solution. The paper indicates several ways which will contribute to an increase in production and quality of milk production.